Արձանագրություն N 7
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 04.06.2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սերգոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Ս. Հայրապետյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Օրակարգ.
ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526 որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերի համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների հրավերի ոչ գնային պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

Քննարկումների արդյունքները

Հանձնաժողովը որոշեց.
Հիմք ընդունելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասը և ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հայտ ներկայացրած <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ի Արցախի Հանրապետության <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (հիդրոտեխնիկական)>> լիցենզիան <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տարածքում կիրառելու և գործընթացը շարունակելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2019թ. N 01.1/26-1/9038-2019 գրությունը, որով նշվում է, որ օտարերկրյա պետության տարածքում ստացված լիցենզիան ՀՀ տարածքում կիրառելու թույլտվություն ստանալու ընթացակարգը պետք է նախաձեռնել «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու դեպքում՝ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելով ՀՀ կառավարության որոշումն ընդունելու համար դիմելու և ընդունելու միջև ընկած ժամկետով.

1. ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասնակից <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ, <<Աշոկ շինարարական ֆիրմա>> ՍՊ, <<Վարուխ>> ՍՊ, <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊ և <<ՎԱԼՄԼ>> ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար հրավերի պահանջների նկատմամբ,

2. Հաշվի առնելով, որ ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով, ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հրավերի ոչ գնային պահանջները բավարարող գնահատված մասնակից <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ, <<Աշոկ շինարարական ֆիրմա>> ՍՊ, <<Վարուխ>> ՍՊ, <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊ և <<ՎԱԼՄԼ>> ՍՊ ընկերություններին՝ առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել բանակցությունների, որը տեղի կունենա 10.06.2019 թվականին ժամը 10:30-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Սերգոյան

Անդամներ _____ Է. Մխիթարյան

_____ Ս. Հայրապետյան

_____ Հ. Սիրունյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան